

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ  
ՈՉ ԽՈՐՃՐԴՅԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
(1918 թ. հունիս–նոյեմբեր)

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1918 թ. մայիսի 28-ին ավելի քան 500-ամյա ընդմիջումից հետո վերականգնվեց Հայկական անկախ պետականությունը։ Հայաստանի Հանրապետությունը ծնունդ առաջ ներքին ու արտաքին չափաղանց ծանր ու հակասություններով լի մայմաններում։ Նորաստեղծ պետության կառավարությունը ձգտում էր դուրս գալ արտաքին աշխարհ և դիվանադիտական հարաբերություններ հաստատել հարեւան ու այլ պետությունների հետ։ Սակայն այդ խնդիրը լուծելու համար հարկավոր էր մի շարք դժվարություններ հաղթահարել։ Բաթումում 1918 թ. հունիսի 3-ի պարտավորագրով ու հունիսի 4-ի պայմանագրով Օսմանյան Թուրքիան Հայաստանի Հանրապետությանը դրել<sup>9</sup> նեղ շրջանակների մեջ պարտադրելով նաև կապեր չունենալ Համաձայնության երկրների, այդ թվում Ռուսաստանի հետ թույլատրելով նրան առնչվել միայն անմիջական հարեւանների ու Քառյակ միության երկրների հետ։ Օսմանյան Թուրքիան Հայաստանի նորակազմ հանրապետության համար գծել էր մի շրջան, որը ճեղքելու և արտաքին աշխարհ դուրս գալու համար պահանջվում էին ժամանակ, արտակարգ ջանքեր ու քաղաքական ճկունություն։

Այդ էր պատճառը, որ Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում Ռուսաստանի հետ նրա հարաբերությունները կրում էին դադտնի և կիսապաշտոնական, որոշ չափով նաև սահմանափակ բնույթ։ Հայ-ռուսական հարաբերությունները պայմանագրոված էին ոչ մինյն հեռավոր անցյալից սկիզբ առած երկու ժողովուրդների դարավոր, ավանդական կապերով ու բարեկամությամբ, այլև՝ տվյալ ժամանակաշրջանում առկա քաղաքական, տնտեսական և փոխադարձ այլ շահերով։

Հարկ է նշել, որ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամատարության «Հատուկ խորհրդակցության» և Հայաստանի Հանրապետության միջև նախնական կապեր հաստատվեցին ու գործեցին ուղամաքաղաքական ասպարեզում։ Կովկասյան ռազմաճակատի վլուգումից հետո շատ ուսւ սպաներ և զինվորներ ծառայության անցան Հայկական բանակում։ «Հայաստանում, — գրում է գեներալ Ա. Դենիկինը, — ուսւներին ավելի լավ էին վերաբերվում, քան նոր կազմավորված մյուս հանրապետություններում։ Մտավորականությամբ և տեխնիկական ուժերով աղքատ երկիրը օգտվում էր ուսւական մասնադետների ծառայությունից և հատկապես ուսւ սպաներին ներգրավում էր իր բանակի շարքերը»<sup>1</sup>։

<sup>1</sup> А. И. Деникин. Очерки русской смуты. М., 1991, с. 146 – 147; о н же. Очерки русской смуты. Белое движение и борьба добровольческой армии. Май-октябрь 1918 (Воспоминания. Мемуары). Минск, 2002, с. 91.

Վրացական կառավարությունը ոչ միայն բռնագրավել էր Կովկասյան ռազմաճակատի համարյա միլիարդանոց ողջ ունեցվածքը, զինվորական ու երկրամասային կառավարչությունների մեծաքանակ վարկերն ու կանխիկ գումարները, այլև անհրաժեշտ չէր համարել ուստական այդ ժառանգության անաշառ բաժանումը, ամենևին չէր հոգացել ուսւ քաղաքացիական բնակչությանն անվտանգ Ռուսաստան տեղափոխելու մասին<sup>2</sup>:

Ռուսական զորամասերը Կովկասյան ռազմաճակատից զանդվածաբար սկսեցին հեռանալ 1918 թ. հունվարի սկզբներին։ Անդրկովկասի տարածքով անցնելիս նրանք ստիպված էին հաղթահարել վրացիների և կովկասյան թաթարների կատաղի դիմադրությունը, որը հաճախ դառնում էր իսկական ճակատամարտ։ Վրացիներն ու թաթարները ցանկանում էին տիրանալ հեռացող զորամասերի զենքին ու զինամթերքին։ Հիշենք թեկուզ Շամինը հայտնի գեպքերը<sup>3</sup>։

Ակագեմիկոս Հր. Սիմոնյանն իրավացիորեն նկատում է. «Ռուսների զինաթափելու և նրանց զենքերը խլելու նպատակով մուսավաթականները և վրաց մենշևկեները մտան արյունալի գործարքների մեջ։ Փակելով երկրամասի հաղորդակցության կարևոր գծերը, կովկասյան թաթարները պաշարում էին գնացքները, զինաթափում և հաճախ էլ կոտրում տուն վերադարձող ուսւ զինվորներին»<sup>4</sup>։ Հայկական բանակի գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Ի. Զինկեիչը 1919 թ. հունվարին Ռուսաստանի հարավի զինաթափերի գլխավոր հրամանատարությանն ուղղված «Հայ-ռուսական հարաբերությունները» վերնագիրը կրող գաղտնի, ուշադրավ զեկուցագրում տեղեկացնում է, որ «Վրացիները ուսւների նկատմամբ իրենց վայրագություններով գերազանցեցին բարբարոս թուրքերին»<sup>5</sup>։ Հայերը ռուսական զինվորների նկատմամբ ցուցաբերեցին ու պահպանեցին ավանդական բարեկամական վերաբերմունք։ Հայաստանի կառավարությունն օգտագործեց հնարավոր բոլոր միջոցները ուսւ զինվորներին ապահով հայրենիք վերադառնալու համար։ Ար. Աստվածատրյանը գրում է. «... բուն Հայաստանում եղած ուսւ զինվորներին պաշտոնով կամ դրամով բավարարելուց հետո, հայոց կառավարությունը բարոյապես հարկադրվեցավ թիվիսում գտնված հազարավոր զինվորներին էլ նպաստ և ճանապարհածախս տալ՝ սպառելով իր վերջին կոպեկները այդ դործի վրա»<sup>6</sup>։ Ապա շարունակում է. «... ես անձնապես պիտի վկայեմ, որ Հայաստանի կառավարությունը «մարդկային վերաբերմունք ցույց տվեց ոչ միայն դեպի ուսւ զինվորականները, այլև դեպի ուսւ պաշտոնյանները, որոնց թիվը քիչ չէր երկանում։ Վերջը, երբ այդ ուսւ պաշտոնյանները դիմեցին մեր իշխանության, ինդրելով հնարավորություն տալ իրենց հայրենիք (Ռուսաստան) վերադառնալու, նրանց տրամադրվեց հատուկ գնացք՝ հոգալով նրանց բոլոր ծախքերը։ Հիշում եմ, թե որպիսի երախտադիտական զգացմունքով նրանք հեռացան երևանից։ «Մենք ուսւներս, երբեք չենք մոռանա այդ ջերմ վե-

<sup>2</sup> Государственный архив Российской Федерации (далее — ГА РФ), ф. 446, оп. 2, д. 136, л. 86; "Вопросы истории", 1992, №3, с. 97 - 98.

<sup>3</sup> Правда о Шамхоре 7-12 января 1918 г., Тифлис, 1927.

<sup>4</sup> Հր. Մ ո ն յ ա ն. Անդրանիկի ժամանակը. գիրք Բ, Երևան, 1996, էջ 4:

<sup>5</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև ՀԱԱ), ֆ. Պ-277, ց. 1, գ. 5, թ. 48:

<sup>6</sup> «Հայրենիք», Բուսոռն, 1928, №12, էջ 130-131, 1959, №5, էջ 68-69:

բարերմունքը, որ ցույց տրվեց մեզ Հայաստանում», — ասում էր ինձ բաժանման ժամանակին նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչ, իսկ Հանրապետության օրերին Ռուս Ազգային խորհրդի նախագահ՝ Զորին»<sup>7</sup>:

Հայտնի է նաև, որ բազմաթիվ հայ սպաներ չպիտեհն մայրենի լեզուն, ժողովրդի հոգերանությունը և հայոց պատմությունը: «Այս հասկացողությամբ՝ հայ սպայությունը, երբ ինքզինք գտավ, — գրում է Վահե Արծրունին, — իր մայրենի հողի վրա, ազգային պետության ծառայության մեջ՝ անծանոթ էր աեղական լեզվին, ուստի չկրցավ ընել այն, ինչ որ հայ ժողովրդը կը սիրեր սպասել և, թերեւ այն, ինչ որ ինքն ալ կենթադրեր, թե պիտի կրնար իրագործել»<sup>8</sup>: Հայ սպաները կրթություն էին ստացել Ռուսական կայսրության զինվորական դպրոցներում ու ակադեմիաներում, զինվորների մեծ մասը ծառայել էր ռուսական բանակում, դաստիարակվել ռուսական ոգով և իրենց տրամադրությունները հայկական բանակում արտահայտում էին հօգուտ Կամավորական բանակի: Մարտավարական այդ կարևոր խնդրին Գ. Զալյուուշյանը տվել է ճիշտ գնահատական. «Զորավարներ՝ Նազարեեկով, Սլյիկով, Գամազով, Հովսեփյան, Փիրումյան, Հովհաննես Հայսվերդով, գնդապետ Վեքիլով լավ գիտեին չին ցարական բանակը ... սակայն կապված չէին սերտ կապերով հայ զինվորների հետ: Հասարակ սպաները, որ պիտի լինեին միջնորդ զորավարների և զինվորների մեջ ուսւ Կամավորական բանակի զինվորներ չին ... որ ծանոթ չէին բնավ հայկական տագնասլին և հայ իրականության, չէին հավատում Հանրապետության հաստատ լինելով, երազում էին վերադառնալ Ռուսաստան համոզված լինելով, որ նորից կհաստատվեն չին կարգերը»<sup>9</sup>:

Հայաստանի Հանրապետության բանակը կազմված էր ռուսական բանակի սկզբունքներով և կառավարվում էր ռուսական զինվորական կանոնակարգով<sup>10</sup>: «Զինվորական նախարարությունը, — գրում է Ռուբենը, — պարզ մանրանկարն էր ռուս զինվորական նախարարության, իսկ բանակը իր ոգով, իր վարժությամբ և գործելակերպով, նույնն էր ինչ ռուսական որևէ զորաբաժին: Իզուր չէ, որ հայկական բանակը կը համարեին Դենիկինի բանակի մի մասը. նմանությունը մեծ էր թե կազմակերպության, թե ձգտումների մեջ: ... Զինվորական բաժինների գլուխ կը գտնվեին մասնագետ զորավարներ, որոնք բազմամյա փորձառություն ունեին ռուսական ծառայության մեջ, նրանցից ոմանք հայտնի էին նույնիսկ ռուսական բանակում: Երբ չէին գտնվում հայ ծագումով ղեկավարներ, ռուս ղեկավարներ էին գործում, որոնց թիվը 400 -ի կը հասներ, չհաշված հասարակ պաշտոնյանեցն ու զինվորները (որոնք փոքրաթիվ էին համեմատած ռուս ծագումով բարձր պաշտոնյաների): Այդպիսով Հայաստանի բանակը կազմակերպված էր զինվորական մասնագիտական տվյալների վրա. նա ուներ իր արժանիքները գիտական տեսակետից, բայց ուներ իր թերությունները ո-

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Վ. Ա թ ծ ը ր ու ն ի. Տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը Շատախ. Երևան, 2002, էջ 376:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. Կ-4033, գ. 6, գ. 293, թ. 53:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. Պ-200, գ. 1, գ. 498, թ. 33:

դու և ազգային տեսակետից»<sup>11</sup>: 1918 թ. (ամիսը, օրը հիշատակված չէ) «Հատուկ խորհրդակցության» նախագահ, գեներալ Ա. Դրագոմիրովին ուղղված գաղտնի գեկուցագրում կոմս Շիլինբրիգը<sup>12</sup> գրում է. «Հայկական բանակը, որտեղ մեծ թիվ են կազմում ոռու սպաները, շատ լավ է տրամադրված: Բոլորովին չեն ճանաչում կառավարության և խորհրդականի (Հայաստանի – Պ. Պ.) իշխանությունը և առիթի դեմքում կարող են հեղաշրջում կատարել»<sup>13</sup> (ընդգծումը մերն է – Պ. Պ.):

Գեներալ Ա. Դենիկինը հայկական բանակը համարում էր Անդրկովկասում Կամավորական բանակի պահեստի ուժը: Եվ ամենաին պատահական չէր այն փաստը, որ Կամավորական բանակի հանձնարարականով գնդապետ Շատիլովը 1918 թ. սեպտեմբերի վերջերին եկատերինոգարից եկավ թիֆլիս՝ նախկին ցարական բանակի սպաներին և զինվորներին (բացառությամբ հայերի) հավաքագրելու՝ Կամավորական բանակում ծառայելու նպատակով, իսկ հայ ուղամագերիների և Կամավորական բանակում ծառայող հայ սպաների ու զինվորների նկատմամբ հատուկ վերաբերմունք գրսկորպեց: Ցանկացողներին նա առաջարկեց ու թույլատրեց իրենց գենքով և ճանապարհի սնունդով մեկնել Հայաստան՝ հայկական բանակում ծառայելու համար<sup>14</sup>:

Հայկական բանակի գլխավոր շտաբի պետ, դնդապետ Մ. Զինկովչը երեանի Ռուսաց ազգային խորհրդի գործուն աջակցությամբ երկանում ստեղծեց հետախուզական գաղտնի խումբ իր գործակալներով, որն անմիջական կապի մեջ էր Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» և թիֆլիսում Անդրկովկասյան Ռուսական ազգային խորհրդի հետ<sup>15</sup>: Ռուսական հետախուզական խմբի քաղաքական կարգախոսն էր՝ «Միասնական, անբաժանելի Ռուսաստանի» վերականգնումը<sup>16</sup>: Խումբը կանոնավոր տեղեկություններ էր հաղորդում «Հատուկ խորհրդակցությանը» Հայկական բանակի, Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական գրության մասին<sup>17</sup>: Հանրապետության ներքին գործերի նախարարությունը կոնկրետ փաստեր ունեց ոռուսական հետախուզական խմբի գոյության ու գործունեության մասին<sup>18</sup>, սակայն Հայաստանի կառավարությունը հանդուրժողականություն դրսեռեց, նախ, որ տվյալ պահին այն վտանգ չէր ներկայացնում երկրի համար, իսկ մյուս կողմից, որպեսզի չխաթարվի ձեավորվող հայ-ռուսական հարաբերությունները:

<sup>11</sup> Ուռբէն. Հայ յեղափոխականի մը յիշատակները. Հ. Է., Թեհրան, 1982, էջ 332–333:

<sup>12</sup> Հայաստանի կառավարությանը կից Կամավորական բանակի և «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչ Լեսլին:

<sup>13</sup> ՀԱ ՌՓ, ֆ. 446, օպ. 1, ձ. 9, լ. 33.

<sup>14</sup> Российский государственный военный архив (далее – РГ ВА), ф. 39720, оп. 1, д. 49, л. 4; "Тифлисский листок", 25 сентября 1918; ՀԱԱ, ֆ. Պ-200, ո. 1, գ. 291, մաս II, թ. 220:

<sup>15</sup> ՀԱ ՌՓ, ֆ. 439, օպ. 1, ձ. 35, լ. 2.

<sup>16</sup> Российский государственный архив социальной-политической истории (այսուհետև՝ ՌԳԱ СПИ), ֆ. 71, օպ. 35, ձ. 195, լ. 188.

<sup>17</sup> ՀԱ ՌՓ, ֆ. 446, օպ. 2, ձ. 39, լ. 33.

<sup>18</sup> ՀԱԱ, ֆ. Պ-376, ց. 1, գ. 1, թ. 13:

Արխիվային վավերագրերը վկայում են, որ հայկական բանակում ձևավորված տրամադրությունները, ուղղվածությունը դեպի Կամավորական բանակը, լայն հնարավորություն ստեղծեց Խուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ ուղմաքաղաքական ճանապարհով հարաբերություններ հաստատելու համար։ Այդ նպատակով հայկական բանակի շտաբի պետի օգնական, փոխգնդապետ Վլասելը, իր դիմումի համաձայն, զինվորական նախարար Հ. Հախվերդովի 1918 թ. հոկտեմբերի 1-ի № 21 հրամանով ազատվեց զբաղեցրած պաշտոնից և գործուղվեց Եկատերինուղարքի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» հետ կապ հաստատելու նպատակով<sup>19</sup>։ Փոխգնդապետ Վլասելի այցը Եկատերինուղար կրում էր կիսապաշտոնական և գաղտնի բնույթի, որովհետեւ դեռ ուժի մեջ էին Բաթումում Հայաստանի Հանրապետության խաղաղարար պատվիրակության 1918 թ. հունիսի 3-ին Թուրքիայի նկատմամբ ստանձնած պարտավորությունը և հունիսի 4-ի հայտնի պայմանադիրը։ Ահա թե ինչու Հայաստանի Հանրապետության կառավարության և զինվորական նախարարության կողմից Վլասելին հանձնված պաշտոնական որոշում, համապատասխան հավատարմադիր կամ վկայական չկար։

1918 թ. հոկտեմբերի սկզբին Հայաստանի զինվորական նախարարության շտաբի գրասենյակն, այնուամենայնիվ, փոխգնդապետ Վլասելին ծառայողական բնույթի գրավոր հանձնարարականով գործուղեց Հյուսիսային Կովկաս։ Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար, գեներալ Հ. Հախվերդովը Վրաստանում Հայաստանի Հանրապետության դորձերի հավատարմատար Ա. Զամալյանին ուղղած նամակում տեղեկացնում է. «Սույն նամակ ներկայացնողը՝ Հյուսիսային Կովկաս մեկնող փոխգնդապետ Վլասել ծառայողական բնույթի հանձնարարություն ունի, ուստի խնդրում եմ Ձեզ իրենից փաթեթ ստանալու դեպքում դրանք ուղարկել էրիվան...»<sup>20</sup>։ Նամակից ակնհայտ է դառնում, որ փոխգնդապետ Վլասել Կամավորական բանակի կապը հայկական բանակի հետ իրականացնում էր Ա. Զամալյանի միջոցով։ Իր առաքելության վերաբերյալ Ա. Զամալյանին ուղղված 1918 թ. հոկտեմբերի 25-ին № 3 նամակում փոխգնդապետ Վլասել դրում է. «Ինձ սրված հանձնարարությունը Կամավորական բանակի հետ կապ հաստատելու ուղղությամբ ես կատարեցի ... (ընդգծումը մերն է - Գ. Պ.): Կամավորական բանակի բարձրադույն հրամանատարության կողմից հայ ժողովրդի նկատմամբ վերաբերմունքը շատ բարյացակամ է, ինչի լավագույն ապացույցն է այն ողջույնը, որով հայկական կառավարության միջոցով հայ ժողովրդին դիմել էր Կամավորական բանակի զլիսակոր հրամանատար գեներալ Ա. Դենիկինը։ Այդ ողջույնի տեքստը ինձ փոխանցված է և ես այն ուղարկում եմ մի խնդրանքով, որ քանի դեռ ստացված չէ բնօրինակը, այն չհրապարակել։ Հայկական կառավարությանը ողջույնի տեքստը կփոխանցի այդ նպատակի համար հատուկ գործուղված Կամավորական բանակի մի սպա»<sup>21</sup>։ Փոխգնդապետ

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. Պ-204, ց. 1, գ. 41, թ. 23:

<sup>20</sup> ՀԱԱ, ֆ. Պ-276, ց. 1, գ. 6, թ. 56:

<sup>21</sup> ՀԱԱ, ֆ. Պ-276, ց. 1, գ. 52, թ. 54:

Վլասել Եկատերինոդարում գործում էր որպես Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության «Հատուկ խորհրդակցությանը» կից հայկական բանակի ներկայացուցիչ<sup>22</sup>:

Փոխդնդապետ Վլասել գործունեություն էր ծավալում մի քանի ուղղություններով: Նրան հանձնարարված էր սերտ համագործակցություն հաստատել Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության հետ և այդ միջոցով հայտնարերել Ռուսաստանի հարավում կուտակված նախկին ցարական բանակի այն հայ սպաներին և զինվորներին, որոնք վերադարձել էին դերմանական և ավստրո-հունգարական գերությունից, և ուղիներ վնտրել նրանց հայրենիք տեղափոխելու համար: Վլասելին հանձնարարված էր նաև հացահատիկ, սննդամթերք, զինամթերք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ուղարկել Հայաստան: Այդ խնդրով փոխդնդապետ Վլասել, դիմելով Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարին, գրում էր. «Այժմյան պայմաններում հայերի հետ կատերը ամրապնդելու նպատակով առաջարկում եմ դիմել հետեւյալ քայլերին.

1. Կազմակերպել և թափումի վրայով Հայաստան ուղարկել ինքնուրույն գործողություններ իրականացնելու ունակ ջոկատ,

2. Հաց, յուղ, օճառ և այլ մթերքներ, ինչպես նաև զինամթերք ուղարկել Հայաստան,

3. Համակողմանի օդնություն ցուցաբերել Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին,

4. Գերմանիայից և Ավստրիայից ժամանած հայ ուղագմագերիներին անհապաղ ուղարկել հայրենիք»<sup>23</sup>:

Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցությունը» գրականորեն ընդունեց փոխդնդապետ Վլասելի առաքելությունը Եկատերինոդար և խոստացավ օժանդակել նրան: 1918 թ. նոյեմբերի 23-ին Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» նախագահ, գեներալ Ա. Դրագոմիրովի հրամանով առաջին խումբ հայ գաղթականները հնարավորություն ստացան նովոռոսիյսկից, Անապայից Բաթում-Երևան մեկնել անվճար, ճանապարհի համար յուրաքանչյուր անձին տրամադրելով 5 փութ ալյուր՝<sup>24</sup>

Հանրապետությունում տիրող սովը մեղմելու նպատակով Ա. Զամալյանը փորձեց փոխդնդապետ Վլասելի միջոցով հացահատիկ և անհրաժեշտ այլ ապրանքներ ներկրել Հայաստան: Գեներալ Ա. Դենիկինին ուղղած զեկուցագրում, ներկայացնելով հանրապետության սոցիալական աղետալի վիճակը, Ա. Զամալյանը գրում է. «... խնդրում ենք Ձեր աշակցությունը Հայաստանի զինվորական շտաբի ներկայացուցիչ գնդապետ Վլասելին, որի մոտ ես գործակալներ եմ ուղարկել Կուբանի մարզում սննդամթերք ձեռք բերելու համար: Նրանք պետք է թիֆլիս բերեն 3000 փութ ալյուր, 50 փութ կենդանական և 100 փութ բուսական յուղ, որոնք Վրաստանի

<sup>22</sup> ՐԳ ՎԱ, ֆ. 39720, օպ. 1, ձ. 62, լ. 3; «Вопросы истории», 1994, № 2, с. 105.

<sup>23</sup> ՐԳ ՎԱ, ֆ. 39720, օպ. 1, ձ. 62, լ. 3; ՇԱ ՐՓ, ֆ. 446, օպ. 1, ձ. 9, լ. 3.

<sup>24</sup> ՇԱ ՐՓ, ֆ. 446, օպ. 2, ձ. 33, լ. 10.

կառավարությունը առաքելության միջնորդությամբ խոստացել է ազատել մաքսավճարումներից»<sup>25</sup>:

Նույն մտահոգությամբ՝ հայկական բանակին անհրաժեշտ հաց և զինամթերք մատակարարելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար, գեներալ Հ. Հախվերդովը 1918 թ. նոյեմբերի 30-ին նամակով դիմեց կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» շտաբի պետ գեներալ Ռոմանովսկովն, նշելով, որ «Երկարատև պատերազմից քայլայված և փախստականներով լեցուն Հայաստանը պարենի, առանձնապես հացի մեծ կարիք ունի:

Պարենային ճգնաժամը սուր արտահայտություն է գտել նաև բանակի շրջանում ... մտահոգվելով զորքը պարենով ապահովելու հարցով, խնդրում եմ գլխավոր հրամանատարի թույլտվությունը աջակցելու նովոռոսիյսկից Փոթի կամ Բաթում հացի փոխադրման և Վրաստանի տարածքով ազատ ելքի հարցում:

Իմ խնդրանքը կատարելով, մեծ օգուտ կտաք հայկական զորքերին, որոնք մեծ կարիք ունեն ոչ միայն պարենի, այլև առաջին անհրաժեշտության բոլոր ապրանքների՝ արտաքին աշխարհից գրեթե լրիվ մեկուսացված լինելու պատճառով»<sup>26</sup>:

Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովը իր 1918 թ. նոյեմբերի 21-ի № 747 գրությամբ նշում է. «Գլխավոր հրամանատարությունը չի փոխում իր վերաբերմունքը Վրաստանի նկատմամբ, քանի դեռ նրա կառավարությունը չի հրաժարվել իր ճգուտմներից Սոչիի երկրամասի նկատմամբ: Զթույլատրել հացի ներկրումը, արգելել ապրանքաշրջանառությունը Վրաստանի հետո»<sup>27</sup>: Զնայած կամավորական բանակը թույլատրում էր Հայաստան ապրանքներ առաքել, սակայն Վրաստանը և Ադրբեջանը կասկածելով, որ Եկատերինողարի և Երևանի միջև գաղտնի կապ գոյություն ունի, ամեն կերպ խոչընդոտում էին հաղորդակցման իրականացմանը: Երևան ուղարկվող բեռները շատ հաճախ վրացական սահմանից կրկին վերադարձվում էին Կուբան կամ էլ թալանվում և առգրավվում էին Վրաստանի ու Ադրբեջանի հյուսիսային սահմաններում: Գեներալ Ա. Դենիկինը համոզվելով, որ Հայաստան ուղարկվող հացի և այլ ապրանքների չնչին մասն է տեղ հասնում, նոյեմբերի վերջին արգելեց հետագա առաքումները Հայաստան:

Նոյեմբերի 6-ին Գլխավոր շտաբի ռազմածովային նավատորմի բաժնի պետ, գեներալ Ա. Լուկոմսկին գնդապետ Լեսլիին վկայական է հանձնում, որով նա՝ Լեսլին օժտվում է Հայկական բանակում կամավորական բանակի զինվորական ներկայացուցչի լիազորություններով<sup>28</sup>, իսկ նոյեմբերի 8-ին «Հատուկ խորհրդակցության» նախադահ գեներալ Ա. Դրագոմիրովը հանձնում է մեկ այլ վկայական, որով իրավունք է վերապահում նրան «քաղաքական բոլոր հարցերով հարաբերությունների մեջ մտնելու Հա-

<sup>25</sup> ՀԱԱ, ֆ. Պ-276, ց. 1, գ. 61, թ. 46:

<sup>26</sup> ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 61 - 62.

<sup>27</sup> ГА РФ, ф. 446, оп.2, д.33, л.12.

<sup>28</sup> ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.164, թ.7:

յաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչների հետ»<sup>29</sup>: Գնդապետը միաժամանակ զինվորական ծառայության էր անցնելու Հայաստանի գլխավոր շտաբում<sup>30</sup> և դադտնի գործող ռուսական հետախուզական խմբում (ծածկանունը՝ գրաֆ Իօրիա Բնլենբրից)՝<sup>31</sup>:

Գնդապետ Լեսլին գործուղվեց Երևան այն ժամանակ, երբ ավարտվել էր Առաջին աշխարհամարտը, տարածաշրջանում հիմնովին փոխվել էր քաղաքական իրադրությունը: Նոր աշխարհաքաղաքական պայմաններում «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» ծրադրով Երևան գործուղված դնդապետ Լեսլին սառը ընդունելության դրամի հայկական պաշտոնական շրջանականներում: Գեներալ Ա. Դենիկինը դրում է. «Հայ գիվանագետները նրան ուղղակի հասկացրել էին, որ «ավելի լավ է առանց խաղաքարտերը բացելու սպասել, քանի որ հայտնի չէ, թե ո՞վ է ավելի ուժեղ, ո՞վ է իրական Ռուսաստանը՝ դո՞ւք, Կոլչակը, թե՞ բոլշևիկները»<sup>32</sup>: Գնդապետ Լեսլին 1919 թ. մարտի 2-ին Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» նախադահ դեներալ Ա. Դրադոմիրովին ուղղած նամակում գրում է. «1918 թ. նոյեմբերին ինձ գործուղեցիք Հայաստան, որպես Կամավորական բանակի քաղաքական և ուղմական հարցերով ներկայացուցիչ: Դրա հետ մեկտեղ ես պետք է ծառայության անցնեի Հայաստանի գլխավոր շտաբում:

Եկատերինոդարից մեկնելուց առաջ դնդապետ Վլասկը (Հետագայում պարզվեց, որ նա Հայաստանի զինվորական նախարարության հետախույզ է) տեղեկացրեց, որ իրը ինձ ուղարկում են մի երկիր, ուր ոչ միայն ողջ ժողովրդը, այլև կառավարությունը անհամբերությամբ սպասում են մեզ և ցանկանում են ամուր կապեր հաստատել Կամավորական բանակի հետ:

Երևան ժամանելու առաջին իսկ պահից ես հասկացա, որ Եկատերինոդարում ստացված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Ճիշտ է, ժողովուրդը և բանակը որոշակիորեն կողմնորոշված են դեպի Կամավորական բանակը, բայց առաջինը քաղցած և հյուծված է, իսկ երկրորդը երկրում ոչ մի գեր չի խաղում, քանի որ ավելի քիչ ուղմական և ֆինանսական միջոցներ ունի, քան ներքին գործերի նախարարությունը: Վերջինիս գաշնակցական ավագակախմբերը ավելի լավ են մատակարավում, քան պաշտոնական բանակը:

Երևան ժամանելուց քիչ անց ես հայտարարեցի, որ Հայ ժողովրդին ուղղված գլխավոր հրամանատարի ողջույնը պետք է թարգմանել Հայերեն և հրապարակել թերթերում և ոչ թե բավարարվել խորհրդարանում ընթերցելով»<sup>33</sup>:

1918 թ. նոյեմբերի վերջին Երևանում դնդապետ Լեսլին վկայականների հետ հանձնեց նաև գեներալ Ա. Դրադոմիրովի նոյեմբերի 8-ի № 519 պաշտոնական նամակը՝ ուղղված Հայաստանի Հանրապետութան արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին: Նամակն առաջին պաշտոնական

<sup>29</sup> ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 164, թ. 6, "Вопросы истории", 1994, № 2, с. 10.

<sup>30</sup> ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 68.

<sup>31</sup> РГА СПИ, ф. 71, оп. 35, д. 195, л. 203.

<sup>32</sup> ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 27; "Вопросы истории", 1994, № 2, с. 105.

<sup>33</sup> ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 68.

փաստաթուղթն էր, որը ներկայացնելով «Հատուկ խորհրդակցության» նպատակը և վերջինիս կազմում ընդդրկված տարբեր բնագավառների անվանի պաշտոնական անձանց ազգանունները, առաջարկում է Հայաստանի Հանրապետությանը դաշնակցել Կամավորական բանակի հետ՝ «... նպատակ ունենալով միավորել ոռուսական հողերը։ Կամավորական բանակը կոչ է անում «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» ճանաչող նախկին ոռուսական կայսրության բոլոր նահանգներին համախմբվել իր շուրջը բոլչեկների գեմ Համատեղ պայքարի ... համար։

Առանց կանխորոշելու ապագա պետության կառավարման ձևը և անգամ այն ուղիները, որոնց միջոցով ոռուս ազգը կդրսեղի իր կամքը և ելնելով մեծ ու սուրբ գործում միասնության հասնելու անկեղծ ցանկությունից, Կամավորական բանակը առաջարկում է Հայաստանի Հանրապետությանը դաշնակցել իր հետ (ընդգծումը մերն է – Գ.Պ.): Նման դաշինքներ կնքվել են Դոնի, Կուբանի, Թերեքի, Ղրիմի և Անդրկասպյան մարզերի հետ»<sup>34</sup>։

Նամակի վերջում գեներալ Ա. Դրագոմիրովը խնդրում էր Ս. Տիգրանյանին Հայաստանի հետ Կամավորական բանակի դաշնակցելու առաջարկի մասին հաղորդել Հայաստանի կառավարությանը և նրա որոշման մասին տեղեկացնել Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցությանը»<sup>35</sup>։

Կամավորական բանակի քաղաքական դաշինքի ընդունումը Հայաստանի կառավարության կողմից կարող էր ծանր հետեւանքներ ունենալ արտաքին աշխարհից կտրված երկրի համար։ Այդ էր պատճառը, որ Հայաստանի կառավարության վարած քաղաքականությունը հայ-ռուսական հարաբերությունների ասպարեզում կրում էր որոշ չափով նաև սահմանափակ բնույթ։

Հակառուսական դիրքորոշում որդեգրած Վրաստանի համար անընդունելի էր Եկատերինոդար - Երևան հարաբերությունների հաստատումը, իսկ արտաքին աշխարհի, հատկապես Ռուսաստանի հետ միակ կազմը Հայաստանն իրականացնում էր Վրաստանի տարածքով։ Սակայն Հայաստանի կառավարության համար գոյություն ուներ նաև մեկ այլ մտահոգիչ հանգամանք։ Դեռևս 1918 թ. հոկտեմբերի 12-ի № 1442 նամակով Ա. Զամալյանը թիֆլիսից արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին տեղեկացնում է. «... գեներալ Դենիկինը արգեն պատրաստություններ է տեսնում այդ քաղաքին (Բաթումին. - Գ.Պ.) տիրանալու։ ... Այս քանի օրն ինձ հետեւալ առաջարկը պետք է անեն (Կամավորական բանակի ներկայացուցիչը - Գ. Պ.). Եթե գեներալ Դենիկինը Բաթումը գրավելիս դժվարությունների հանդիպե վրացիների կողմից՝ արդյոք Դենիկինը կարող է հուսալ, որ Հայերը վրաց սահմանադրիսին այնպես կպահեն իրենց, որ Վրաստանը չկարողանա իր բոլոր զինվորական ուժերը կենտրոնացնել դեներալ Դենիկինի դեմ» (ընդգծումը մերն է – Գ. Պ.): Այսուհետև Ա. Զամալյանը նամակում արտահայտում է իր գիրքորոշումը այդ հարցում, նշելով. «... մենք միանգամայն հեռու ենք գտնվում մեր հարեաններին թիկունքից հարվածելու

<sup>34</sup> ՀԱ ԲՓ, ֆ.446, օպ.2, ձ.33, հ.198.

<sup>35</sup> Նույն տեղում։

մտադրությունից, այդ պարզ է ինձ համար։ Սակայն ինչ պատասխան պետք է տալ եթե այդպիսի մի առաջարկ լինի ինձ, որպեսզի ոռւս դորականությունը մեր գեմ ևս չգրգռվի, որ նրանց հաջողության դեպքում կարող էր ծանր հետևանքներ ունենալ մեղ համար։ Խնդրում եմ այս մասին ևս որոշ հրահանդներ տալ»<sup>36</sup>։

Ճիշտ է, Բաթումի վրա Կամավորական բանակի հարձակումը ձգձգվեց, և նման առաջարկություն չարվեց, սակայն Հայաստանի կառավարության համար խիստ մտահոգիչ և զգաստացնող հանգամանք էր նման առաջարկության դադարան անգամ, որին երբեք տուրք չափեցին երկրի իշխանությունները։ Եվ պատահական չէր, որ Հայաստանի կառավարությունը հակառակ Կամավորական բանակի պահանջների, իր պաշտոնական ներկայացուցին չդորձուղեց Եկատերինոգար, և փորձեց օգտագործել դիվանագիտական հնարավոր բոլոր հնարքները նրա հետ հարաբերությունները իրականացնելու բացառապես տնտեսական, առևտրական ոլորտներում Հայաստանին անհրաժեշտ հաց, սննդամթերք, զինամթերք ստանալու և նման այլ խնդիրներ լուծելու համար։

Վերոհիշյալ նամակում գեներալ Ա. Դրագոմիրովը Հայաստանից սլահանջում էր նաև պատվիրակություն ուղարկել Ռումինիայի թասսի քաղաքում նոյեմբերի 16 -ին հրավիրվող խորհրդակցությանը մասնակցելու համար, որի ընթացքում քննարկվելու էր «« Ռուսաստանի շահերի պաշտպանությունը»» հարցը<sup>37</sup>։ Հայաստանի կառավարությունը խիստ զգուշավորություն դրսեորեց այդ հարցում ևս։ Անհրաժեշտ էր նաև հստակեցնել հրավիրվող խորհրդակցությունում քննարկվելիք հարցերի նպատակը և Հայաստանի Հանրապետության մասնակցության նպատակահարմարությունը։

Մինչ այդ հրավերը, նման առաջարկություն էր արել Կուբանի երկրամասի կառավարության նախագահ Լ. Բիչը։ Ռուսականաց Կենտրոնական ռագային կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիայի անգամ, կապիտան Աշոտ Տոնյանցը 1918 թ. հոկտեմբերի 13 -ին Ռուսականաց Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի ներկայացուցիչ Գ. Զամոյանի հանձնարարականով Կիևից Երևան<sup>38</sup> մեկնելու ճանապարհին, Եկատերինողարում հանդիպեց Կուբանի երկրամասի կառավարության նախագահ Լ. Բիչի հետ՝ քննարկելով 1918 թ. նոյեմբերին Ռուսաստանի հարավի և ինքնավար մարզերի ապագա կոնֆերանսին Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի մասնակցության հարցը։ 1918 թ. նոյեմբերի 7 -ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված պաշտոնական գրության մեջ Ա. Տոնյանցը գրում է. «Պարոն Բիչը իմանալով այն մասին, որ ես ուղերդվում եմ Երևան, խնդրեց Հայտնել Հայաստանի կառավարությանը, որ Կուբանը շատ կցանկանար տեսնել Հայաստանի ներկայացուցչին Ռուսաստանի հարավի ինքնավար մարզերի ներկայացուցչիների ապագա կոնֆերանսի անհրա-

<sup>37</sup> ՀԱԱ, ֆ. Կ-200, ց. 1, գ. 66, թթ. 95-96։

<sup>37</sup> ՀԱ ՊՓ, ֆ. 446, օպ. 2, ձ. 33, լ. 199.

<sup>38</sup> Գ. Պ բ ո ո յ ա ն. Հայաստանի Հանրապետության և Ռուսականաց դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.). Երևան, 2002, էջ 34։

ժեշտության և նրա խնդիրների մասին, պարոն Իիչի խոսքերով, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունները տեղեկացված են»<sup>39</sup>:

Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը նոյեմբերի 11 -ին Ա. Զամալյանին ուղղած նամակում խնդրեց ճշտել Եկատերինոգարում հրավիրվող կոնֆերանսի «... մեզ ուղարկվելիք հրավերաթղթի վիճակի մասին»<sup>40</sup>: Արդյունքում պարզվեց, որ կոնֆերանսի հրավիրման գլխավոր նպատակն էր «ծավալել պայքար բոլշևիզմի դեմ»<sup>41</sup>: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չհամարեց իր պատվիրակությունը գործուղել Եկատերինոգար, քանի որ բուն Հայաստանում բոլշևիզմը թույլ էր և սպառնալիք չէր ներկայացնում երկրի անվտանգությանը:

Հայաստանի կառավարությունը գգուշավորություն ցուցաբերեց նաև Յասսիում հրավիրվող խորհրդակցությանը Հայաստանի պատվիրակության մասնակցության հարցում: Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Յասսիում խորհրդակցություն հրավիրվեց Ռուսաստանի հակաբոլշևիկյան ուժերի և Համաձայնության երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում պետք է որոշվեին խորհրդային իշխանության գեմ ընդհանուր ճակատի ստեղծման հարցն ու պայքարի հետագա ուղիները<sup>42</sup>: Յասսիի խորհրդակցությանը մասնակցում էին Ռուսական նախկին կայսրության անվանի պետական-քաղաքական դործիչներ՝ Պ. Միլյուկովը, Ի. Նովիկովը, Ն. Ներատովը, Ա. Գուչկովը, Ն. Խոմյակովը, Ա. Տիտովը, Ս. Տրետյակովը, Վ. Շուլգինը, Մոսկվայի և Կիևի նախկին քաղաքագլուխներ Ռուլդներ և Դեմչենկոն ու մի շարք այլ գործիչներ, թվով 50 մարդ<sup>43</sup>:

Յասսիի խորհրդակցությունում քննարկվող հարցերի և այգ խորհրդակցությանը Հայաստանի պատվիրակության մասնակցության անհրաժեշտությանը անդրադարձավ Գ. Զամոյանը: 1918 թ. նոյեմբերի 14 -ին արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին ուղղած նամակ-զեկույցում նա գրում է. «... Ներկայումս Յասսի քաղաքը դարձել է Համաձայնության երկրների դիվանադիտական դործունեության կենտրոն: Յասսիում կայացան մի շարք խորհրդաժողովներ, որոնց մասնակցում էին ոռու Հայտնի հասարակական գործիչներ, ինչպես նաև Կամավորական բանակի ներկայացուցիչներ: Վերջիններիս Համաձայնության երկրները խոստացել են մեծ օգնություն ցուցաբերել: Համաձայնության երկրները որոշել են վերականգնել Ռուսաստանը իր նախկին սահմաններում, բացառությամբ Լեհաստանի և Ֆինլանդիայի: Ռուսաստանի պետական կառավարման վերջնական ձևը կորոշի գեմոկրատական սկզբունքներով ընտրված Սահմանադիր ժողովը: Ռուսաստանից բոլշևիզմի վտարման համար Համաձայնության երկրները որոշել են նրա տարածքում ձևավորված բոլոր բանակներից ստեղծել Կամավորական բանակի հրամանատարությամբ գործող մեկ ճակատ:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. Պ-200, գ. 1, գ. 154, թ. 10:

<sup>40</sup> ՀԱԱ, ֆ. Պ-200, գ. 2, գ. 24, թ. 5, ֆ. Պ-276, գ. 1, գ. 10, թ. 57:

<sup>41</sup> ՀԱԱ, ֆ. Պ-200, գ. 1, գ. 154, թ. 38:

<sup>42</sup> Պ. Բ. Մ ի լ յ օ ւ. Վօսպօմինայ. Մ., 1991, ս. 7.

<sup>43</sup> ՊԳԱ ԾՊԱ, ֆ. 71, օպ. 34, ձ. 1839, լ. 156.

Հստակորեն զգացվում է, որ Ռուսաստանից բոլշևիզմից հետո դեմոկրատիայի և միապետության միջև համառ սլայքարը կշարունակվի և այն չի սահմանափակվի հրապարակախոսությամբ, քանի որ երկու կողմերն էլ ունեն իրական ուժեր՝ տարբեր բանակներ, ջոկատներ և այլն: Երեսում է, որ Ռուսաստանի պետական կյանքում ցնցումները դեռ երկար կշարունակվեն: Ներկայումս Յասսիում լուծում է ստանում Ռուսաստանի վերածնման հարցը և գրա հետ կապված որոշվում է նաև Անդրկովկասի ճակատադիրը: Ահա թե ինչու մեր շահերի պաշտպանության և Ռուսաստանի նկատմամբ զիրքորոշումը ճշտելու համար մենք Յասսիում պետք է անպայման լիազոր ներկայացնեիներ ունենանք:

...Ավարտելով իմ զեկույցը, խնդրում եմ շտամ պատվիրակություն ուղարկել Ռւեկաինա՝ Յասսի այցելելու իրավունքներով, եթե մինչ այդ գիշանադիտական խորհրդակցության կենտրոնը չտեղափոխվի մեկ այլ վայր»<sup>44</sup>:

Գ. Զամոյանի նամակ-զեկույցից հստակ երեսում է, որ հրավիրվող խորհրդակցությունում լուծվելու էր հակաբոլշևիկյան ուժերի ընդհանուր ճակատի ստեղծման խնդիրը, որին ակտիվ աջակցելու էին Համաձայնության երկրները և իրականացվելու էր «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագրը. Կայսրությունից անջատված Անդրկովկասյան անկախ հանրապետությունները վերամիավորվելու էին Ռուսաստանին: Այսուհետև իր զեկույցում Գ. Զամոյանը տեղեկացնում է նոյեմբերի 12-ին Եկատերինոդարից վերադարձած Պ. Միլյուկովի հետ իր ունեցած հանդիպման ու զրույցի մասին, որի ընթացքում Պ. Միլյուկովն ասել էր. «Այս պատերազմում հայ ժողովուրդը ապացուցեց, որ Անդրկովկասի ազգություններից միակն է, որ պետական գիտակցություն և կայուն ոգի ունի: Պետք է վերականգնվեն 1914 թ. օգոստոսի 1-ի գրությամբ եղած Ռուսաստանի սահմանները: Ցանկալի է վերականգնել միացյալ Անդրկովկասը, որպեսզի հայերը ազգեն Անդրկովկասի մյուս բաղկացուցիչ մասերի՝ Վրաստանի և Ագրբեջանի վրա: Վերջին իրագարձությունները ապացուցեցին, որ վրացիներին և մահմեդականներին վստահել չի կարելի: Ինքնավար, միացյալ Անդրկովկասի ստեղծումը հայերի համար նպաստավոր է նաև այն պատճառով, որ այդ դեպքում Թիֆլիսը կլինի հայերի անմիջական ազդեցության ներքո: Վրաստանի նկատմամբ Կամավորական բանակի վերաբերմունքը խիստ բացասական է: Վրացական պետությունը ստեղծվել է գերմանական քաղաքականության կողմից և պետք է լուծարվի:

Կոնգրեսում Ռուսաստանը պետք է հանդես գա միացյալ պատվիրակությամբ և բոլոր միջոցներով պետք է խոչընդոտի Ռուսաստանի առանձնացած մասերին իրենց ներկայացնեիներն ունենալու հարցում: Եվս մեկ անգամ հայտարարում եմ, որ Հայաստանի նվիրվածությունը Ռուսաստանին երբեք չի մոռացվի և ես անձամբ ամենուր կպաշտպանեմ հայ ժողովրդի շահերը»<sup>45</sup>:

<sup>44</sup> ՀԱԱ, ֆ. Պ-276, ց. 1, գ. 52, թթ. 58-59:  
<sup>45</sup> ՀԱԱ, ֆ. Պ-276, ց. 1, գ. 52, թ. 59:

Գ. Զամոյանը 1919թ. հունվարի 23-ին արտաքին գործերի նախարար Ա. Տիգրանյանին ուղղած նամակ-զեկույցում տեղեկացնում է, որ առանց Անգրկովկասյան Հանրապետությունների պատվիրակությունների մասնակցության «Խուս պատղամավորության թասսիի խորհրդակցությունը (1918թ. նոյեմբերի 18), քննելով Կովկասի հարցը հետևյալ կարծիքն է հայտնել:

Առանձին տեղ է բռնում Հայկական հարցը, որի մեջ Խուսաստանը չի կարող իր ձայնն չունենալ (Միլյուկովի կարծիքը): Պատգամավորությունը անհրաժեշտ է գտել բացասական վերաբերմունք ցույց տալ դեպի Վրաստանի պահանջները և հարց չբարձրացնել հայերին Խուսաստանին միացնելու մասին»<sup>46</sup>:

Այսպիսով, արխիվային բազմաթիվ վավերագրերը հաստատում են, որ անկախացման առաջին ամիսներին, մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Խուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ կրում էր կիսապաշտոնական, գաղտնի բնույթ: Իերված բոլոր փաստերը հավաստում են, որ Հայաստանի կառավարությունը, մի շարք լուրջ դրդապատճառներից ելնելով, մի կողմից ձգտում էր կապեր հաստատել Խուսաստանի հարավի զինված ուժերի դիմավոր հրամանատարության ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ, մյուս կողմից նրանց նկատմամբ դրսերում էր խիստ զգուշավորություն, որի հետևանքով հայ-ռուսական հարաբերությունները ինչ-որ տեղ կրում էին սահմանափակ բնույթ: Հայաստանի Հանրապետությունները ինչ-որ տեղ կրում էին սահմանափակ բնույթ: Հայաստանի Հանրապետությունները սահմանափակել առևտրատնտեսական շրջանակներով՝ ծանր վիճակում գտնվող Հայաստան հացահատիկ, սննդամթերք, զինամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ ներկրելու, ինչպես նաև հայ ուղղագրիներին ու գաղթականներին հայրենիք տեղափոխելու համար:

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ И НЕСОВЕТСКИЕ ГОСУДАРСТВЕННЫЕ  
ОБРАЗОВАНИЯ ЮГА РОССИИ  
(Июнь—ноябрь 1918 г.)

ГЕГАМ ПЕТРОСЯН

Р е з ю м е

Статья посвящена одной из доселе неизученных проблем в армянской историографии — истории отношений между Республикой Армения и добровольческой армией юга России в первый период существования республики. Полностью изолированная от внешнего мира, находящаяся в напряженных неблагоприятных внутри- и внешнеполитических условиях молодая Республика Ар-

<sup>46</sup> ՀԱԱ, ֆ. Դ-200, գ. 1, գ. 73, մաս 1, թթ. 118-119:

мения искала спасение страны, армянского народа в установлении связи с Верховным командованием вооруженных сил юга России и действующим при нем "Особым совещанием". Установление связей с добровольческой армией диктовалось также политическими, экономическими и иными причинами. В статье показано, чем была обусловлена секретность взаимоотношений между Республикой Армения и Верховным командованием вооруженных сил юга России и "Особым совещанием", их полуофициальный, иногда ограниченный характер, обстоятельство, которое было связано также со стратегией "Особого совещания".

THE REPUBLIC OF ARMENIA AND NON-SOVIET STATE  
FORMATION OF THE SOUTH OF RUSSIA  
(June – November 1918)

*GEGHAM PETROSYAN*

S u m m a r y

This problem is devoted to the investigation of the field which hasn't been yet explored by Armenian historiography: the history of relations of the Republic of Armenia (first period) with the Voluntary army of the South of Russia. Entirely isolated from the external world, appearing in very tough and disadvantaged internal and external political situation, the newly-born Republic saw the only way out for the nation in establishing ties with the Headquarter of the military forces of the South Russia and with "Special Consultancy" attached to it. Establishment of relations with the Voluntary Army was also imposed by political, economic and some other reasons. Their main reasons that kept those relations a secret, their semi-official, sometimes even limited nature, a factor which was tied to the strategic policy of "Special Consultancy" are raised.